

ՍԱՄՎԵԼ Մ. ԾԱՀԻՆՅԱՆ

Դայասպանի անձավագիրական կենդրունի նախազահ

ՔԱՐԱՆՉԱՎՆԵՐԸ ԴԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ցանկացած լեռնային երկրամասի համար քարանձավները մեծ դեր են խաղացել այդ տարածքում ապրող բնակչության կենցաղի, սովորույթների, աշխարհայացքի ձևավորման գործում: Այդ են վկայում տարբեր մայրամաքների բնիկ բնակչության լեգենդները, առասպելները, էպոսները և հնքիաթները¹:

Հայաստանը և հայ ժողովուրդն այս առումով բացառություն չեն: Հայ մշակույթի մի ամբողջ շերտ է զբաղեցնում «քարանձավային մշակույթը», որը, քիչ ուսումնասիրված ոլորտ լինելով հանդերձ, երևի թե իր մեջ պարունակում է բազմաթիվ հարցերի պատաս-

¹ Օսմերական էպիկական «Գիգամեշ» ներոսապատման ներուս՝ Գիգամեշը, անմահություն փնտրելու համար ճամփորդում է դեպի աստվածների երկիրը և այնուհետ հասնելու համար ստիպված է լինում անցնել Մաշու (իմա՞ Մասիս) լառան թումնով: Տես Գիգամեշ, թարգ. և մերած. Ն. Մարտիրոսյանի, ՀՍՍՌ ԳԱ, 1963 թ., էջ 74:

«Սասունցի Դավիթ» էպիկական ներոսապատման տարբերակներում քարանձավը ներկայացվում է որպես գործընթացների և հարաբերությունների համգուցալում վայր՝

«... Ասաց. «Կանգմի՛ր, իմ թուր զարմն է եղ քարին,

Թե կտրենց, ես չեմ մեղավորցեր

Թե չը կտրենց, մեղավորցեր եմ»:

Թուր, որ էզար քարին.

Քար երկու կողմեն փեղկվավ,

Ինք, իր ձին գնացին մեջ.

Քար էկավ, իրար կպավ»:

(«Սասունցի Դավիթ» էպոս: Արաշարանը Լ. Մկրտչյանի: Երևան, Արևիկ, 1988, էջ 415):

Կամ՝

«Պտի երթաս Վան, Կըռուպահու քար կա,

Ընտե մի զայա կա, մտմիս էն զայեն,

Մնաս էնտեն, ապրիս (պատմեց՝ Մոկացի Մարտիրոս Մուրադյան, էջ 55):

Ես իմ թուր թալին, ես խայեն բացվի,

Ես էրտամ մեջ:

Ու գորգը զարգեց,

Զարգելում խայեն բացվավ»:

(պատմեց՝ Ալաշկերտցի Սեղրակ Արաշյան, էջ 245):

«Սաման Ծոեր», գրառումը՝ Սարգիս Հարությունյանի և Արուայր Սահմակյանի, ՀՍՍՌ ԳԱ, 1979:

Քարանձավը նաև մեկուսանալու թաքստավայր է.

«Հոնան չուզեց իր վերջին մանկան էլ կորցնել: Իր ծնողների Ուրանոս - երկնիքի և Գեա - երկրի խորհրդով հանուացվ, գմաց Կրետե կղզին, և խորումն մի անձավում ծնվեց Զրա կրտսեր որդիին՝ Զևսը»: Տես Ն. Ա. Կուն,

«Հին Հոմաստամի լեգենդներն ու առասպելները», Երևան, «Լուս», 1989 թ., էջ 21:

խաներ, որ հնագույն և հին պատմության հետազոտողները չեն գտնում անցյալի տարբեր հուշարձանները և հնագիտական հյութը քննելիս:

Միայն այն փաստը, որ քարանձավային բնակավայրերը Փոքր Ասիայում և Հայաստանում գոյություն են ունեցել մինչև XX դարի կեսերը², խոսում է այն մասին, որ այս բնագավառը երևի թե ավելի մեծ ուշադրության է արժանի, քա՞ն Է:

Հայաստանի Հանրապետության տարածքում մարդաստեղծ (անտրոպոգեն) քարանձավառ տարածված են ամենուր: Բնակելի համայիշներ են պահպանվել Գեղարդում, Ուխտուակումբի (Խոսրովի արգելոց) ստորին հոսանքի կիրճի ժայռապատերին, Գորիսում և շրջակա գյուղերում, Լոռիում, Աշտարակի ձորում, Ողջաբերդում, Ախուրյամի ձորում և այլն:

Սրանք եղել են բնակավայրեր, քայլ կամ եկեղեցիներ և համալիրներ, որտեղ բնակվել են ճամանակուներ՝ Գեղարդ, Հոշանց³:

Քարանձավառների և ժայռափոր կառուցյաների նման զանգվածային օգտագործումը կենցաղում չէր կարող չանդրադանալ մարդկանց մտածողության վրա և պատճառ չդադար բազմաթիվ նոր լեգենդների ու առասպելների երևան գալուն:

Սակայն փաստն այս է, որ քարանձավառների մասին եղած ժողովրդական բանահյուրության նմուշները մեզ են հասել դարերի խորքից, իսկ նոր լեգենդներ կամ ենթաթեմեր սովորյան հորինվել: Հետաքրքիր է ան այն փաստը, որ ամիսին քարանձավարձակների անմիջական ժառանգների մոտ որևէ հիշողություն «քարանձավային» կյանքից չի պահպանվել: Ավելին: ՀԱԿ-ի արշավախումբը որևէ տարածքում հետազոտություններ սկսելուց առաջ ուստինասիրում է գրավոր աղբյուրները և տեղում հարց ու փորձ անում բնակիչներից: Զրուցում են հիմնականում հովհանքների, որորդների, անտառապահների և ծերերի հետ:

Մի տեսակես է տարածված ժողովրդի մոտ, որը հանրապետության գորեք բոլոր վայրերում լսում ենք: Մեր այն հարցին, թե տվյալ բնակավայրի շրջակայքում քարանձավառներ կան, հիմնական պատասխանը լինում է՝ թե կան, քայլ շատ խորն են, ոչ չի կարող մտնել, որովհետև օդը շնչելու համար պիտանի չէ, և ոչ մեկը չի խորացել մինչև վերջ: Հաճախ հավելում են նաև, որ այս կամ այն քարանձավը երկար մի թունել է, որն իրենց բնական պատասխանը են նաև, որ այս կամ այն քարանձավը երկար մի թունել է, որն իրենց բնա-

² Տե՛ս Սողոմոն Վարդանյանի «Հայակական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն», Հայպետիքատ, 1959 թ., Երևան, էջ 5-20, Le Citta Sotterranee Della Cappadocia. Ezga Edizioni. Genova, 1995. 31-32, 106-120. Tavola 3. 4. 5. 6. Տոքարսկի, Ճարեք II Յօհաննես Բագրատիոնի անունու համար անուղղական ան այս փաստին: Ավելացնեն միայն, որ ես ճանաչում եմ մարդկանց, որոնք այսօր ել կենդանի են, որոնք ճնշել և մանկության տարիներին ապրել են Սևանի պահանջիկ Գորիսի ժայռափոր տներու (Հեղ.):

³ Ս. Շահինյան, Քաշարաղի քարանձավային սրբաւորիները և բնակավայրերը, «Հայացք Երևանից», Երևան, 2002 թ., N 10, էջ 21-24: Ս. Շահինյան, Հոշագ գետի պահանջի քարանձավառները, «Հայացք Երևանից», Երևան, 2002 թ., N 11, էջ 25-28:

⁴ Տե՛ս Հայաստանի անձավագիտական կենտրոնի, ՀՆՍՀ ԳԱ Աշխարհագործական ընկերության քարանձավագիտական ջոկատի և արշավախմբի քարանձավագիտական հետազոտությունների գիտական հաշվետվությունները, որոնք գտնվում են ՀՀ Հուշարձանների պահպանության վարչության, ԱԱ Հնագիտության և ազգագործության ինստիտուտի և ԱԱ արխիվներում:

կավայրից սկսվում և զգվում է գետնի տակով մի քանի կամ մի քանի տասնյակ կիլոմետրեր, հակառակ այն պահմանը, թե ոչ ոք մինչև վերջ չի խորացել:

Այս երկու տեսակետները, որ չափազանց տարածված են գյուղական վայրերի բնակիչների շրջանում, իրական որևէ հիմք չունեն: Այս մտածողության պատճառը երևի թե պետք է փնտրել մարդկանց ներազիտակցական հիշողության շերտերում: Մարդու վերջնականապես ուզում է խօթի կապը, այսպես կոչված, «քարանձավային քաղաքակրթության» և քարանձավային կենցաղի հետ, և այս պատճառով ամենամուշ և սարսափելի գովներով է ներկայացնում քարանձավը՝ դրանով հիմ մերժելով «քարանձավային» կենցաղին վերադարձնալու որևէ ցանկություն կամ շարժադրի:

Այս առումով տիպական է և այն փաստը, որ փլուզման կամ շինարարական աշխատանքների ժամանակ եթե որևէ ստորգետնյա թունելի, անցուղու կամ քարանձավի մուտք է բացվում, տարբեր պատճառարանությամբ տեղի բնակիչները այն լցնում են խիճ ու ավազով և բնտունե խցան հագցնում⁵: Տարածված այս վաստ սովորությունը պատճառ է դարձել հնագիտական և բնագիտական չափազանց արժեքավոր հյութերի անդառնալի կորստի: Պատմական վկայություններն ու գրավոր աղբյուրները մանրազնին ուսումնասիրելով մնեն (ՀԱԿ-ի քարանձավագետները) համոզվել ենք, որ ստորգետնյա, ճարտարագիտական և բնական հուշարձանների ոչնչացումը բացառապես նոր երևույթ է մեզանում:

Հյայատանի քարանձավների և քարանձավային բնակավայրերի մասին գրել են Քսենոֆոնը, Ստրաբոնը, Խորենացին, Դավիթեցին, Արտեմ Արարատցին և իմարկե նոր շրջանի հետազոտողները՝ Մառը, Օրբելին, Տոկարսկին, Թորամանյանը, Ղիփշիձեն, Բալյանը և այլոք: Քարանձավագիտական հյութը Հյայատանի անթրոպոգեն քարանձավների և ժայռափոր ճարտարագիտական ստորգետնյա կառույցների մասին թե՛ քանակական և թե՛ որակական առումով շատ է, որը և հնարավորություն է ընձեռում գիտականուն ծավալվել խնդրո առարկայի շուրջը:

Մի շաբաթ հետինակներ փորձել են ստորգարանել անձավ, քարանձավ բառերը՝ պարզելու նրանց ծագումը: Այս հետազոտություններն առանձնապես արժեվորվում են նրանով, որ հետազոտողներն այս բառերի ծագումը ոչ միայն կապում են կենսատոպի⁶ տարրերի և մրանց փոխարարերությամ, այլև հայ էրմոգենեզի և զարգացման գործընթացների հետ:

Այսպես. հայ ճարտարապետության զարգացման պատմության երախտավորներից մեկը՝ Տոկարսկին, գրում է. «Տեղեր պեղեր հազար այր-եր, և քարայր (Bryuir); սլոво այր սամօ օբյակնություն է առաջարկություն առաջարկության մեջ»:

⁵ Երևանում Նորագյուղ, Բութամիա, Արեշ, Էջմրումի քաղամասներում հայտնի են բազմաթիվ դեպքեր. երբ շիմարարական աշխատաքնների ժամանակ բացված թունելները պարզապես լցունել են բնտուախանությունը ու փակել: Օմիրամի հայտնի ջրամցքի բավական մեծ հատվածներ այդպես են ոչնչացվել: Գյումրիում դարեր շարումնակ գոյություն ունեցող քարվեգների (ստորգետնյա ջրատար համակարգ) վերջնական ավերումը տեղի ունեցավ երկաշարժից հետո: Օրգով գյուղի վերին հատվածում ուղղուած աշխատավորական հայտնաբերությունը (մակակիմաւ կիրովայան կատուց) բյու արանցում բացված հնագույն թունելի ամքը փակեցին խոշոր քարերով ու մողով: Լոռվա Վարդարուր գյուղից Կորթամ տանող ճամապարհի մոտ բացված թունելի ամքը փակելու համար, ըստ ակամատեսների, ամրացնելու եղավ բայց թունելաւագա ու խիճ:

⁶ Կենսագնոցի ապրելու վայրն է: Տես Ս. Շահինյան, Ն. Թահիմազյան, Էկոլոգիա, «Զանգակ», 2002 թ., Երևան:

употребляется только в живой речи. Мне пришлось слышать это только в Ани, чаще всего от г. Вруйра, его сына Арташеса, Тарагроса, ... Оно построено так же, как и **кар – түн**, и это подтверждает, что термин **кар – түн** действительно был и заменился (между XIII–XX вв) новым **кар – айром**⁷: Այս եզրակացության Տոկարսկին համգել է՝ ծանոթանալով վրաց Թամարա թագուհու պատմության անանուն հեղինակի գործի հետ, որտեղ մատեմագիրը հիշատակում է 1211 թ. Զատկի գիշերը Արդեքի սովորակի հարձակումը Անիի վրա: 12000 մարդ կոտորվեց եկեղեցիներում աղոթքի պահին, իսկ մնացածը խումանափառ մի մասը՝ պալատ, մյուս մասը՝ քարանձավներ, որը վրաց հեղինակն անվանում էր քարտուններ: «Քարտունի» բառը բացացիորեն հշանակում է քարե տուն, բառակապակցություն, որը, ըստ Տոկարսկու, տիպիկ հայկական բառ է: Այստեղից ան եզրակացնում է, որ տեղացիների կողմից օգտագործվող բառը բնակելի քարանձավների անվանում է, որը վրաց պատմիչն օգտագործելին նաև բացատրություն է տալիս, թե ինչի մասին է խումանից «տունը» փոխարինվել է «այր»-ով: Սակայն հնարավոր չէ համաձայնել գիտնականի հետ մենց թեկուզ այն պատճառով, որ «այր» բառին մենք հանդիպում ենք V–XIII դարերում մի շարք պատմիչների մոտ՝ սկսած Խորենացու Միհջն Այրիվանեցին: Այնուամենայնիվ, «քարտուն» բառի գոյությունը խոսում է այն մասին, որ անեցիների համար քարանձավ-բնակարանները ծառայել են ոչ որպես բնակվելու ժամանակավոր վայր, այլ՝ տուն, որտեղ սերունդներ են հաջորդել իրար: Զափազան աղքատիկ են այն տվյալները, որ մարդիկ քարանձավային բնակարանը համարել են տուն, հարազատ օջախ, սակայն կարծում ենք, որ պատմիչներն այս հարցին ընդհանրապես չեն ամերադարձել՝ երևույթը համարելով ինքնաստինքան հայկանալի, առօրեական և սովորական մի բան, որի մասին խոսելը, առավել ևս արձանագրելը անհմատա էր: Այս տրամաբանության ֆոնի վրա շահեկանորեն առանձնանում է Քսենոֆոն Աթենացու «Անարասիսը», որտեղ պատմիչն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է ժայռափոր տունը և կենցաղը, որպես արտասովոր և եղակի երևույթ, մի բան, որ տեղացի պատմիչների ու գրիչների համար չափազանց սովորական և առօրեական լինելով՝ գրավոր նկարագրության չի արժանացել վերջիններին կողմից⁸:

Այս առումով հետաքրքիր է Մովսես Խորենացու կողմից Վաճի ժայռափոր քարանձավների ոչ միայն ճշգրիտ նկարագրությունը, ինչպես շատ դիպուկ է նկատում Մովսես Մելքոնյանն իր «Վաճի ուրարտական դամբարանները» գրքում, այլև կառուցման ժամանակը: Մովսես Խորենացին մենք այլ տեղում ել խոսում է Արաքսի ժայռապատերի ամ-

⁷ Տե՛ս Դ. Ա. Կոպուդզե, Պատեր Ան, ԱՀ Արմ. ՀՀ, 1972, Երևան, ս. 24. «Այժմ քարանձավն անվանվում է այր>եր կամ քարար (Վրույր): Այր բառն ըլրունաված է հին գրական հայերներում, քար-այր բառը գործածվում է միայն կենացի խոսակցական նեգում: Այն ես լսեցի միայն Անիում, բոլորից համայս այն Վրույրից (Ակատի ուղի Անիի արշավախմբի լուսակարիչ Արամ Վրույրին, (1863/1924 թթ.) խմբ.), նոր որդուց՝ Տարագրոսից... Այս բառն ումի այն կազմությունը, ինչ որ՝ քար-տուն-ը, որը գալիս է հաստատելու, թե քար-տուն տերմինը իսկական եղանակում է:

⁸ Տե՛ս Քսենոֆոն Աթենացի, Անարասիս, ՀԱՍՀ ԳԱ, 1970, Երևան, էջ 96–97: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 1, էջ 1–2: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 2, էջ 3–4: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 3, էջ 5–6: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 4, էջ 7–8: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 5, էջ 9–10: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 6, էջ 11–12: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 7, էջ 13–14: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 8, էջ 15–16: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 9, էջ 17–18: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 10, էջ 19–20: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 11, էջ 21–22: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 12, էջ 23–24: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 13, էջ 25–26: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 14, էջ 27–28: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 15, էջ 29–30: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 16, էջ 31–32: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 17, էջ 33–34: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 18, էջ 35–36: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 19, էջ 37–38: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 20, էջ 39–40: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 21, էջ 41–42: Տե՛ս Ս. Մ. Շագինյան, Կտորոֆոնայի մասին առաջին պատմությունը, մաս 22, էջ 43–44:

մատչելի քարանձավների և էպիկական Արտավագդի համար զնդան դարձած Մասիսի քարանձավի մասին: Եվ ոչ մի խոսք քարանձավային բնակավայրերի և նրա բնակիչների մասին, այն դեպքում, եթե Լեռնահայաստանի բնակչության մի ստվար մասն ապրում էր քարանձավային բնակավայրերում: Պատճառը երևի ճուղըն է: Քարանձավային բնակավայրերը և սրան համապատասխանող կենցաղն այն աստիճանին սովորական և առօրեական երևույթ են եղել, որ ժամանակակիցները հարկ չեն համարել գրավոր անդրադարձ կատարել ինքնուստինքյան համարականի և պարզ այս երևույթին:

Այստեղ ավելորդ չեր լինի «քարայր», «քարանձավ», «այր», «անձավ» բառերի սոուգարանության մի քանի հեղինակների տեսակետները դիտարկել: Հետաքրքրություն ներկայացնող տեսակետ են առաջ քաշում Ա. Փիլիպոսյանը և Ռ. Մկրտչյանը⁹ պնդելով, որ

⁹ Տե՛ս Ա. Ս. Փիլիպոսյան, Ռ. Ա. Մկրտչյան, Գեղորշիտի Վանտոսպյան (Ուրարտական) քարայր դամբարանները, Երևան, «Զանգակ», 2001 թ., էջ 66: Հեղինակները գրում են. «Այս համատեքստում, թերևս, անթրածիշտություն կա անդրադանակ նաև Հայերեն արմատական բառարամի «այր» և «անձավ» արմատներին և վերջիններից կազմված «քարայր» և «քարանձավ» բառերին: Սրանց հոմանիշները հայերենում բազմաթիվ են (քարախոռչ, քարախորչ, ժայռախոռչ, վիմախոռչ, վիմախորչ, լեռնախոռչ, ծերպ, ժայռածերպ, որմանծերպ, քարածերպ, ժայռածներպ, քարածներպ, որմանծներպ և այլն): Թենի դատելով հրապարակի վրա առկա մասնագիտական գրականությունից, քննարկվող երկու բառերի և մասնավորապես «անձավ» բառարմատի նախնական ձևն ու սոուգարանությունն առ այսօր ներկայացվում է հարցականով (Զարուկյան Գ., 1987, էջ 112): Ինչ են մատնամշտմ և իմաստավորում «քարայր» և «քարանձավ» բառերը: Բանն այն է, որ նշված երկու բառը բառերի և՝ «այր», և՝ «անձավ» բաղադրիչները նաև ինքնուրույն բառեր են և որոշակի (ըստ որում՝ հոմանիշից) հիմաստային ծանրաբեռնվածություն կարող են դրսնութել: Այսպիսս. «այր» նշանակում է նաև «տղամարդ», և «քարայր» երկարմատ բառային գոյացությունը հնարավոր է նախապես ընկալվել է «քարի, ժայռի մեջ բնակվող այր» տղամարդը հիմաստով: Թերևս նմանատիպ կազմություն են նաև «այրումի»՝ «ծիռու վրա նստած այր՝ տղամարդ», «այրասեր»՝ «ամուսնու սիրող, տղամարդ սիրող», «այրընտիր»՝ «ընտիր տղամարդ, աչքի ընկոնտ այր՝ տղամարդ», «սկեսրայր»՝ «ամուսնու հայր, սկեսրոց այր, ամուսնու մոր այր՝ տղամարդ» և այլ բարդ բառակազմությունները:

Նմանօրինակ մեկնարամություն կարելի է առաջարկել նաև «քարանձավ» բարդ բառի «-անձավ» բառադրիչին: Վերջինս, հնարավոր է, «անձ»՝ «մարդ» բառի հետագա հոլովական դրսնորման մի տարբերակն է, որը, ըստ երևույթին, գոյացել է բառավերջի «-ա» բաղադային սղման հետևանքով (օրինակ՝ ուռն-ուռ, մատն-մատ, ձեռն-ձեռ, որմն-որմ, լեռն-լեռ, նաև՝ անձն-անձ, որտեղից էլ անձնամբ-անձամբ և անձնաւ-անձաւ): Եթեն առաջարկվող նեթադրությունը չի հակասում հայերենի քերականական օրենքներին, ապա «քարանձավ» երկարմատ բառային գոյացությունը ևս նախապես, հնարավոր է, ընկալվել է «անձով (անձաւ)՝ տղամարդով բնակեցված բար, ժայռ, քարախոռչ, իմաստով: Ավելացնենք նաև, որ «այր» և «անձավ» բառադրիչները՝ քննարկվող բառը բառերը կազմում են միայն «քար» արմատի հետ («քար-այր», «քար-անձավ») և չեն միանում նրա հոմանիշներին («ժայռ», «ծերպ», «որմն», «վեմ» և այլն): Եվ սա հատկանշական է, քանի որ քերված հոմանիշներից միայն «քար-Ծ»՝ «ամուր, կարծր, պիտի, կոշտ» իմաստներից զատ հնդեւլորպական որոշ լեզուներում ունի նաև «ընկույզ, ընկույզի կեղև, կոկոսի ընկույզ» և «խեցգետին» իմաստները (համեմատիր, սանակիրիտ «karkas»՝ «կոկոսի ընկույզ», «karkata»՝ «խեցգետին», հումարեն «խարչից», «խեցգետին», լատիներեն «carina»՝ «ընկույզի կճեպ», «carcero-cancer»՝ «խեցգետին», հմաշպես նաև հայերեն «քարժամկ»՝ «խեցգետին» և բարբառային «կակավ» (գուցեն «կարկար, կարկառ» բար՝ նախնական ծիկից՝ «ընկույզ, պնդուկ» բառագոյացությունները (Անայան Հ., 1979, էջ 558-561): Այսինքն «քար» արմատ իմաստավորում է նաև կարծր մակերսև և համեմատաբար փուլը կամ դատարկ միջոցով ունեցող առարկա կամ գոյացություն, որի միջից կարող է ծարքակալ ընձյուղ կամ որուս եղել կենդանի արարած: Երևույթ, որ մեկ անգամ և իր էությամբ համադրվում է քարայրում ամփոփված և վերածնման ունակ Մեռնող-Հառնող Աստծո (նաև էպիկական հերոսի) վարքագին: Այս ամենը թույլ է տալիս են-

«քարանձավ» բառը բաղկացած է «քար» և «այր» արմատներից, որտեղ «քարը» դա պինը մակերեսն կամ կեղև ունեցող մարմին է, իսկ «այրը» տղամարդն է: Երկրորդ արմատի մեկնաբանության հետ կարելի է համաձայնել, սակայն «քար» բարի ճնան մեկնաբանությունն այնքան էլ չի համոզում: Հեղինակներն իրենց այս մեկնաբանության վրա կառուցում են Մեղմող-Հաղող Աստծո «բնակավայրի» կամ գտնվելու, գերեվարվելու վայրի վարկած՝ գտնելով, որ «քարը նշանակում է բնական այնպիսի մի դատարկություն, ուր կարելի է մտնել, սողոսկել, և կամ որտեղից «կարող է ծլարձակել ընձյուղ»: Այս վերջին օրինակն ընդհանրապես համարում չէ նախաքրիստոնեական հայերի բնապաշտական աշխարհ-ընկայումն: Որովհետև ստորգետնյա դատարկությունները ծածկող երկրաբանական և հողային շերտերը հիմնականում ջրագրկված և անբերդի են նամանավանդ կրաքարային կարստացող ապարներով հարուստ շրջաններում, որտեղ հոդային ծածկույթն ընդհանրապես բացակայում է: Մեկ որիշ հեղինակ՝ Ակարիչ, քանդակագործ, խաչքարի մասնագետ վ. Պետրոսյան¹⁰ առաջ է քաշում մի հետաքրքիր տեսակետ, որի հետ դժվար է չհամաձայնել: Նա պնդում է, որ խաչքարի գաղափարը բնակելի քարայրի սիմվոլացման արդյունք է: «Քարայր», ըստ վ. Պետրոսյանի, նշանակում է այրվող քար, կամ քարանձավ, որտեղ կրակ է վառվում: Կրակը, որպես ջերմության, կյանքի, լուսի աղբյուր, միանգամայն կարող էր հանգել կենաց ծառի սիմվոլին, իսկ այն շրջանակող գարդաքանդակված կամար՝ քարանձավի մուտքի գաղափարին: Խաչքարի մասին, որպես թե նախաքրիստոնեական և քրիստոնեական ժամանակաշրջանները կամքող հայկական մշակույթի մի իմքնատիպ երևույթ, վ. Պետրոսյանն անդրադարձ է կատարել «Հավատի զինանշանը» հոդվածում¹¹:

Ս. Փիլիպոսյանի «այր» բարի ստուգաբանությունը և վ. Պետրոսյանի տեսակետը, թե «այր» բառը նշանակում է կրակ, չեն հակասում իրար, այլ կարելի է պնդել, որ լրացնում են իրար: Այստեղ տեղին կլիներ հիշատակել կրակի աստվածության՝ Վահագնի¹²: Վահագնի աստվածության մասին տարբեր հեղինակների բազմակարծիքության պայմաններում պյուտամենայնիվ գրեթե բոլորն ընդունում են, որ առ առ կրակի ու իրի աստվածն է,


թաղորե, որ «քարայր» և «քարանձավ» հասկացությունների տակ նախապես ընկալվել են բնական կամ ձեռակերտ այն ժայռասոսուները, որտեղ, ըստ վաղթագական առասպելաբանական պատկերացումների, փակվել են մտողող-հասպանող դյուցազուները, կամ, վերջիններին մնան կապված, ծիսակարգի համաձայն ամփոփվել են նրանց հավասարեցված և սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող հասում տարիքի տղամարդկանց (հաճախ զան գրանց անդրախարիբյան ուղեկիցների) դիմակներ ու աճյունները»:

¹⁰ Տեսակետը վ. Պետրոսյանը հայտնի է խաչքարերի մասին մեր գրուցի ընթացքում: Տեսակետը տպագրվում է մրա բամավոր համաձայնությամբ: Ըստ որում, ըստ վարկածի հեղինակի, այս միտքը ընդգրկված կի-մի խաչքարերի մասին առաջիկայում հրատարակվելիք հրովարձարում և գրքում:

¹¹ «Մունիդ առնելով և շարունակարար գյուտանելով պատմական հայրենիքում Հայաստանում, խաչքարն իր գոյանյութի մեջ ներառել է հայ ժողովորի պատմական միշտողությունը, կապված մախաքրիստոնեական հագարակամերում մարդու կողմից բնության երևույթների ուսումնակիրման, ճամաշման, գմարատման և կանոնակարգման հետ», և ապա նույն հորվածում «...չեղ մերժում (իմա՞ խաչքարը) մախաքրիստոնեական աշխարհ-ընկայումը, հակառակը, հաշտեցնում էր մին ու նոր մտածողությունը ...»: Տես՝ «Հավատի զինանշան (խաչքար)», «Հորիզոն», N 22, Երևան, 2003, էջ 2:

¹² Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1990, էջ 54:

թերևս այս հարցում, թե ուրույն տեսակետով առանձնանում է Ս. Գասպարյանը, որը մերժում է Վահագնի՝ կրակի աստված լինելու գաղափարը¹³: Ինչնէ, եթե այժմ մի շղթայի մեջ նայենք և քննենք վերոբիշյալ մեկնարանությունները, ապա կտանանք հետևյալ սխեմատիկ պատկերը՝



Եթե շղթան շարունակելու միտումով դիմենք, «Սամա ծոեր», դյուցազնավեպի Փոքր Մթերի և առասպեկտական Արտավագդի և Միիր աստծո կերպավորումներին, ապա կունենանք շղթայի բնականն ավարտը, որը բնապաշտական հայեցակարգից բխող և այդ ընկալումների սահմաններում ձևավորված մոտածողության արգասիք լինելով հանդերձ, ամբողջացնում է նախաքրիստոնեական հայերի վերաբերմունքը և իմացությունը շրջակա միջավայրի վերաբերյալ: Դիտարկելով բխուու, բիոցենոգ փոխարարերությունները էկոգործումների անընդհատական փոխարարերությունների պայմաններում, նախաքրիստոնեական հայերը հասկել են բնության ներդաշնակության ընկալման այնպիսի մի որակի, որում բացակայում են «վատ», կամ «լավ» հասկացությունները, իսկ տարբեր հեռուսների և կերպարների արարքներն ընկալվում է այնպես, ինչպես կա՝ առանց կողմնակալ մեկնաբանությունների¹⁴:


Այժմ հայ էպիկական բանահյուսության զարգացման պատմության գիտական վերլուծությունների հիման վրա ամփոփենք շղթան՝¹⁵

¹³ Ս. Ե. Գասպարյան, Վահագն աստծո պաշտամունքի հարցը, «Հայաստան», 1993 թ., Երևան, էջ 51. «... Վահագն պետական դիցարանում ամենից առաջ հանդես է եկել որպես պատերազմի, ուազի և քաջության աստված: և ոչ թե շատերի կողմից հորջորջվող արկի, ամպրոպի ու կայծակի, կրակի, անձրևի, ամպի և այլի աստված»:


¹⁴ Թե՛ Փոքր Մթերի քարանձավում փակվելու և թե՛ Արտավագդին Մասիսի քարանձավում գերելու վերաբերյալ էսպոսում և առասպեկտում չկան բնորոշում դեպքի «վատ» կամ «լավ» լինելու մասին: Բացասարար չեն բնութագրվում նաև վիշապազումները: Այստեղ նույնիսկ հայրական անեծքը, որը մերուսների մեկուացման կամ բանտարկության պատճառ է դառնում, դիտարկվում է որպես ինքնըստիճանքան հասկանալի և բնականն մի քան:

¹⁵ Ս. Փիլիպոսյան, Ռ. Մկրչտչյան, Գեղրիվիտի Վամտոսայան քարայր-համբարամը, «Զանգակ», 2001, Երևան, էջ 62: «Այս սյուժեում եվրափական և մասնավորապես նաև հայկական առասպեկտարանական համակարգերից լավ հայտնի արկի (իր ծագելու և մայր մտնելու՝ նաև լուսն կամ լճի «մեջ մտնելու» հատկությամբ), հողմի-ուազմի և Մեռմող-Համող աստվածությունների գոլգորոված, անձնավորված և վիպականացված կերպարն է, իրեն բնորոշ կենդանական կող խորհրդանիշներով (ագռավ-Անզոտ-Ֆենիքս, կիմե-վարագ-Նինշուրուր, Ճի-Բուռկիկ Զալալի-Աշվիններ), բնավորության երկվությամբ (բարություն-չարություն, հանցանք-զղութ) և երկիրականի լոկուսներում (ջուր-ցամաք, լուս աշխարհ-մոլոր քարայր) գոյատնելու կարողությամբ»:

Վերոբիշյալ մեջբերման հետինակների մեկնարանությունը եթե իմաստափառական մակարդակից տեղափոխենք էկոլոգիական մակարդակ: այսինքն ինտագուտման այլ մեթոդարանությունը ընտրենք, ապա կիսամուկնենք, որ խոսք ոչ թե հակասություններին է վերաբերում, այլ էկոլոգիական տարբեր գործուներին, որոնք ել ապահովում են էկոհամակարգի դիմամիկ զարգացման կենսականորեն անհրաժեշտ գործներացը (Հեղինակ):



Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ քարանձավների առաջացման հիմնական պատճառը չուրն է՝ իր էրողին և կորոգին հողմնահարման գործոններով։ Այս առումով պատկանական է «Վահագն» բառի աճայանական մեկնարանությունը, ըստ որի «Վահն» - չուրն է և «ագն» - կրակը։ Եթե ընդունենք, որ սպեկոգենեզի հիմքում չուրն է, որը ձևավորում է քարանձավը, իսկ այն բնակության համար պիտանի դարձնելու համար մարդը միանշանակ պիտի օգտվի կրակից, ապա ոչ թե իրար հակասող երևություների հետ գործ ունենք, այլ մարդու էկուսոպին ամերաժեշտ երկու էկոլոգիական գործոնների հետ։ Կստանանք շղթայի վերջնական տեսքը՝



Քարանձավ-բնակարանները սփոված են Հայաստանով մեկ, սակայն որոշ տեղերում նրանք մեծ թիվ են կազմում։ Տոկարսկին գտնում է, որ Անիի քարանձավային քաղաքի ծաղկման շրջանում Մահկոցանորում, Խգաճորում և Գալլաճորում ընդհանուր առմամբ եղել են հազարից ավելի քարանձավային բնակելի համալիրներ¹⁶։ Գորիսում և շրջակա գյուղերում Խանորեսկ, Տեղ, Քարաշեն և այլն, բնակելի քարայրների թիվը հուզակեց հազարից ավելին է։ Ավելին, Տոկարսկին, Վկայակոչելով Ներսես Սարգիսյանին¹⁷ ու Ղևոնդ Ալիշանին¹⁸, պնդում է, որ Անիի քարայրներից մի քանիքը գործածվել են որպես կրպակ¹⁹։

Հաստ մի շաբաթ, այդ թվում վերոինիշալ հեղինակների՝ քարանձավների հման կուտակումը մի վայրում պատահական կամ քառային բնույթ չի կրել, հակառակը, սրանք բոլորն իրար հետ կազմել են օրգանական ամրողություն, որի բաղադրիչների և տարրերի փոխհարաբերությունը տիպական է կալացած քաղաքներին։ Օրեելին Անիի ստորգետնյա ժայռափրերությունը տիպական է կալացած քաղաքներին։ Օրեելին Անիի ստորգետնյա ժայռափրերությունը տիպական է անվանում է՝ «Ստորգետնյա Անի»²⁰։ Եվ իսկապես, եթե ընդունենք, որ յուրաքանչյուր քարանձավային համալիրում ժամանակին բնակվել են նվազագույնը 5-7 մարդ, ապա հազար ժայռափրում բնակվել են մոտ վեց հա-

¹⁶ Տե՛ս Դ. Կիուազզե, Պեղեր Անի, ս. 22.

¹⁷ Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայոց, Վենետիկ, 1864, էջ 144։

¹⁸ Ծիրակ, 1881, էջ 87։

¹⁹ Տե՛ս Դ. Կիուազզե, Պեղեր Անի, ս. 22.

²⁰ И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани. Анийская серия N 4, СПб, 1910, с. 9.

զար մարդ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ X-XIII դարերում Լոնդոնը 15000, իսկ Փարիզը ընդամենը 10-12000 բնակիչ է ունեցել, ապա «ստորգետնյա քաղաք» կամ «ստորգետնյա Ան» անվանումը ամենահն էլ չափազանցություն չէ: Ս. Վարդանյանը, մեջբերում անելով Լեհման Հառապտից (C. F. Lehmann – Haupt, Armenien Eist and Setzt – Berlin, 1910, էջ 333), գրում է²¹: «Տիգրանակերտից մինչև Առերդ, երբեմն եղել է քարանձավարակ մի ժողովրդի կենտրոն»: Ժայռափոր ճարտարագիտական այս կառուցների մասին Լեռն գրում է²²: «... կարելի է ամսիալ ասել, թե այժմյան մեր ուներ գյուղացին անգամ դրանից լավ բնակարան չունի իր ապրուստը հոգալու համար: Բացի դրանից, պատահում են այնպիսի այրեր, որոնց առջև դուք ակամա կանգ եք առնում: Առանց մեծ ծախսերի չեր կարելի փորել այդպիսի գեղեցիկ, նոյնիսկ զարդարուն սենյակներ»: Բնական է, որ ժամանակավոր կացարանը մարդն այդքան խնամքով և ջանափրաբար չեր բարեկարգի, ավելին, այս երևոյթն արդեն խոսում է որոշակի կենցաղային ինքնատիպ մշակովյան առաջացման փաստի մասին: Այս երևոյթն առավել ընդգծվում է «ստորգետնյա Անի» եկեղեցիներն ուսումնասիրելիս: Մասի Անի արշավախմբի քարանձավագիտական հետազոտություններն իրականացնող Դիմիշիձեն և Տոկարսկին հաշվել են 35 եկեղեցի և վանք, որոնցից մի քանիսը՝ Կարմիր եկեղեցին, Հոնենցների մատուռը, ցնցում են կատարելության և ճարտարապետական լուծումների ինքնատիպությամբ: «Ստորգետնյա քաղաքում» ունենող միջև մրցակցությունն է եղել և եկեղեցաշինության ասպարեզում: Սա միշնադարյան հայկական քաղաքներին բնորոշ մի առանձնահատկություն է, որը ևս գալիս է հաստատելու, որ աստորգեսնյա Անին իսկապես ֆունկցիոնալ քաղաք է եղել ուրբահամակարգերին բնորոշ բոլոր առանձնահատկություններով: «Ստորգետնյա Անի»՝ որպես առանձին ինքնուրույն քաղաք լինելու օգտին է խոսում և այն փաստը, որ այս տարածքում մի քանի մեծ քարանձավներ կան, որտեղ 2000-2500 ոչխար են տեղավորում²³:

Այսինքն, քաղաքն իր կարիքները հոգալու համար ունեցել է նաև պահեստներ, պահեստարաններ և տարածքներ, որը միանգամայն հարմար էր շուկայի դեր կատարելու համար:

Ստորգետնյա Անին եզակի չէ իր ձևի մեջ: Փոքր Ասիայում հետազոտող Պոլ Լուկասը²⁴ 1713-15 թթ. ճանապարհորդական ճոթերում նշում է նվազագույնը տասն այդպիսի քաղաքների մասին, իսկ իտալացի հետազոտողներ Վ. Կաստելամին, Գ. Փամիզ²⁵, ինչպես նաև Ռ. Բիկունու²⁶ կապահովվածություն ուր ստորգետնյա քաղաքների հետազոտության արդյունքում չափագրել և նկարագրել են 19 եկեղեցիներ և վանական համալիրներ:

²¹ Սողոմոն Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, 1959, Հայպետնուած. Երևան, էջ 12-13:

²² Լեռ, Ան, 1941, Երևան, Հայպետնուած, էջ 190:

²³ Տե՛ս Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, 1959, Հայպետնուած. Երևան, էջ 13:

²⁴ Տե՛ս W. F. Ainsworth. Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia. I-II, London, 1842.

²⁵ Le Città sotterranee della Capadoccia, Erga edizioni, 1996, Genova, p. 53-70.

²⁶ Նույն տեղում, էջ 106-121:

Այսպիսով, ի մի բերելով Փոքր Ասիայում ժայռափոր բնակավայրերի մասին տեղեկությունները, կարելի է համարձակորեն խոսել «քարանձավային մշակովթի»²⁷ մասին, որի մի հզոր շերտը գույն հայկական է, որի ազդեցությունն ինչպես Անտոռիայի, այնպես էլ Կապադովկիայի, Կիլիկիայի քարանձավաշինության և քարանձավային կենցաղի առողմության դիմումը է և անվիճելի²⁸: Քարանձավային մշակովթ արտահայտությունը չափազանց դիպուկ է բնութագրում այս միջավայրը, որովհետև Ասմած ճարտարապետությունից, ճարտարագիտական և շինարարական առանձնահատկություններից մինչև քարանձավաբնակելի կենցաղն ու փոխհարաբերություններն ինքնատիպ մի մտածողություն և մշակովթ են ձևավորված ենել:

«Քարանձավային մշակովթ», նամամավանդ նրա ճարտարապետա-ճարտարագիտական հասունացն համամարդկային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է, որի ժայռափոր վկայությունները տաճարների և սուրբեանների տեսքով պահպանվել են աշխարհի գրեթե բոլոր մայրցամաքներում, ամեն տեղ յուրովի զարգացում ապրած, բայց և բնորոշ տվյալ տարածքի արմատական բնակչության մշակութային սովորույթներին: Հնագույն քաղաքակրթությունների տարածաշրջաններում հնագետները, որպես կանոն, քաղաքակրթության ակիզը գրանցում են քարանձավային բնակավայրերի պեղումների արդյունքում (քացառությամբ քացարձակ հարթավայրային տարածքում առաջացած քաղաքակրթությունների): Տվյալ քաղաքակրթության զարգացման գործնաթաց անդամադրել են «քարանձավային քաղաքակրթության» վրա: Այս երևույթն առավել վառ արտահայտություն է գտնել ճարտարապետական կառուցման բարձրագույն առաջացած քաղաքակրթության մասնակիցներում, որմնամկարներում, ինչպես, օրինակ, Եգիպտոսում Նոր Թագավորության շրջանում կառուցված փարավոնների դամբարանները կրկնում են «Վերերկրյա» կառուցման ճարտարապետական մանրամասները, հներկական I-IV դդ. ժայռափոր տաճարների ինչպես ճարտարապետական մանրամասները, այնպես էլ քանդակները, զարդարական ինչպես արձանահամերերը կրկնում են վերերկրյա կառուցման մանրամասները: Նման օրինակները բազմաթիվ են: Բերենք սրբանցից մի քանիսը. Ս. Կալիստի, Ս. Դոմենիլի և Ս. Սեբաստյանի կատակումբները Հոռոմում²⁹ ճարտարապետական լուծումներով՝ կիսակլոր կամարներ, սրբանց պահող պյումերը, խորանները, բեմը և այլ մանրամասներով կրկնում էին «Վերերկրյա» ճարտարապետության տարրերը, իսկ Մաշու-Ռիկու-ի ինկական քարանձավները հնատակագծով իրենց քառակուսի կամ ուղղամկուն գծագրությամբ, ինչպես նաև լուսամուտների և մուտքերի գծագրությամբ կրկնում են դարավանդների վրա փոխած հինավորց քաղաքի տների ճարտարապետությունը³⁰: Բուղարիայի հվանովյան ժառափոր վանքի պատերը զարդարող որմնամկարները³¹ կատարվել են XIV դ. բյուզանդական եկեղեցական որմնամկարչության լավագույն ավանդների համաձայն:

²⁷ Զևակերպումը Բեղենակին է:

²⁸ Տե՛ս UIS Congress La Chaux-de-Fonds 10-17 August, 1997, V3, Samvel Shahinian, The Cave Dwellings and Churches.

²⁹ Տե՛ս Φ. K. Pavillo, Цвета Рима. EPITRICE LOZZI. Roma, 1994, p. 84-86.

³⁰ "ALT – PERU UND SEINE KUNST", Ferdinand Anton, Buch und Kunstverlag. Leipzig. 1972.

³¹ Г. Чавърков, Български манастири. Септември, 1978, София, с. 152-157.




ԺԱՅՈՒԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻ
(Այս և հաջորդող լուսանկարները՝ հոդվածագրի)



ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՔԱՐԱՆՉԱՎԻ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԺԱՅՈՒԱՊԱՏԸ



ՀՈՂԱՆՑ ԱՆԱՊԱՏԻ ԺԱՅՈՒՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ



ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ՔԱՐԱՆՉԱՎԸ

Հայաստանում նմանօրինակ զուգահեռներ է անցկացնում Տոկարսկին³² համեմատելով ժայռափոր «Կարմիր եկեղեցին» և Հոնենցի մատուրը «Վերերկոյա» Անիի ճարտարապետական հուշարձանների հետ:

Եթե «քարանձավային մշակույթի» զարգացման գործընթացները դիտարկելու լինենք քաղաքակրթության ծագման ու զարգացման ծիրում, ապա կհամոզվենք, որ քարանձավների առաջին բնակչների կենցաղն ամրող աշխարհում նույն է եղել: Բոլոր մայրցամքներում հայտնաբերված հնագույն մարդկային քարանձավային կացարաններն իրարից տարբերվում են միայն երկրաբանական շերտախմբի (որի մեջ առաջացել է) չափերով և միներալային, պետրոգրաֆիկ կազմով:

Ընդհանրապես անթրոպոգեն քարանձավների բարենորոգման, բարեկարգման ձևն ուղակիրեն կախված է եղել բնակեցնողների աշխարհընկալման հայնեցակարգից, մշակութային և հոգնոր սկզբունքներից:

Մինչ նախնադարյան համայնական հասարակարգի ձևավորումը մեզ հայտնի բնակեցված քարանձավներն ամրող աշխարհում օգտագործվել են ժամանակավորապես կամ ընդհատումներով, սակայն որոշ դեպքերում երբ քարանձավը գտնվել է կլիմայական բարենապատ պայմաններով օժտված բիոտոպում, որը մարդկային պոպուլյացիայի համար գերակայող էկոտիպ դասնայում հնարավորություն է ընծեռնել, մարդկային խմբերի կողմից քարանձավն օգտագործվել է հարյուրավոր և հազարավոր տարիներ ի վեր: Նման քարանձավների օրինակներ ունենք Հայաստանում և հարող տարածաշրջանի երկրներում: Այս քարանձավներում մշակութային շերտը հասնում է մի քանի մետրի և չափազանց մեծ հետաքրքրություն է Աերկայացնում հնէաբանների, մարդաբանների, հնագետների համար: Դրանցից են Ազոյիս³³, Ցիալտուրուն³⁴, Շանդիարը³⁵ և այլն: Այս քարանձավներում հայտնաբերված հնագիտական և հնէաբանական հարուստ հյութերը

³² Տեքստում Ն. Մ. Տոկարսկու հետազոտություններին համեմատարար հաճախ անդրադարձ կատարելու պատճան այս ինքնատիպ և համարձակ գիտական ամերաբույն նվիրվածությունն էր իր մասնագիտությանը, ինչպես նաև պատմական իրողությունների կամավական խեղաթյուրումների ժամանակաշրջանում գիտմականին արժանի կեցվածքը չկորցնելու և հայ քարանձավագիտությանը գիտական մի նոր որակ հաղորդելը: Այսուհետեւ ավելորդ չենք համարում հիշեցնել, որ 1947 թ. Տոկարսկին ամենախիստ քննադատության է ենթարկվել առաջինայն գիտականների կողմից (տե՛ս Օբ օճոռ պրիմեր искачекеия исторический правды. ակադ. Ծ. Ծյառապի), որտեղ նրան պիտակավորում են որպես հակամարդիստական և հակաստայինական: Եթե հիշենք նաև Ստալինի պատմաբանական գիտական ակրտումների հետևանքում մահացու քննադատության թիրախ դարձած Մարտին, Լենին, որոնց մերձաւոր գործնկերն եր Տոկարսկին, ապա պարզ կդառնա, թե ինչ կամք էր պետք այդ հազվագյուտ մարդուն և գիտմականին շարունակել հետազոտություններն ու մինչև վերջ ամնահանջ շարունակել իր գործը:

³³ Տե՛ս Կասմովա Ռաբիա, Մամեդ Մեհտի Կիզը, Первая находка самого древнего пещерного человека на территории СССР, АН Аз. ССР, 1986 г.

Ծանեն Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Հայաստան, 1985 թ., էջ 108-111:

³⁴ Նույն տեղում:

³⁵ “Пещера в горах Загрос на С. Ирана. В 1951 – 65 открыты остатки скелетов ископаемого человека неандертальского типа вместе с орудиями мустьевской культуры. Древность 50–70 тыс. лет”. БЭС II том, М. “Сов. Энцикл.” 1991, с. 649.

վայում են վաղ քարե դարի մարդկանց կյանքում տեղի ունեցած խոշոր բեկում: Եթե մինչ այդ մարդը կրակի և որտորդական գենցերի ու գործիքների գյուտերը կատարելով իրականացրեց «քանական» հետափոխություն, որով և իր համար սահմանեց մի այլ կարգավիճակ էլորհամակարգի մյուս բիուների նկատմամբ, ապա գեղանկարչության հայտնագործությամբ, աշխարհնկալման հոգևոր, գեղագիտական դրսւորման իր ընդունակությամբ, մարդը փաստորեն հայտարարեց անթրոպոգեն էլորհամակարգի ստեղծությամբ, իր հաստատակամության մասին³⁶: Էլորհամակարգի և ոչ մի բիուտիկ տարր կամ բանական իր հաստատակամության մասին³⁶:

40 Բազար տարի առաջ վաղ քարե դարի մարդկանց կյանքում տեղի ունեցած խոշոր բեկում: Եթե մինչ այդ մարդը կրակի և որտորդական գենցերի ու գործիքների գյուտերը կատարելով իրականացրեց «քանական» հետափոխություն, որով և իր համար սահմանեց մի այլ կարգավիճակ էլորհամակարգի մյուս բիուների նկատմամբ, ապա գեղանկարչության հայտնագործությամբ, մարդը փաստորեն հայտարարեց անթրոպոգեն էլորհամակարգի ստեղծությամբ, իր հաստատակամության մասին³⁶: Էլորհամակարգի և ոչ մի բիուտիկ տարր կամ բանական իր հաստատակամության մասին³⁶:

Էլորհամական աշխարհը, ապավել ևս չի գրանցվել օրգանիզմների կողմից հոգևոր ներհայեցման որևէ փաստ: Այս ապավել ևս չի գրանցվել օրգանիզմների կողմից հոգևոր ներհայեցման որևէ փաստ: Այս աշխարհը, իրավունք եւ վերապահում ընդունել այդ պահից սկսած անտրոպոգեն բարանձավների ի հայտ գալը: Ամբողջ աշխարհում այսօր հայտնի են 100-ից ավել քարանձավներ, որոնց պատերին նախամարդը պատերել է իր առօրյան, շրջակա աշխարհը, գույներով և գծով արտահայտել իր վերաբերմունքը, զգացմունքներն արտաքին աշխարհի երևութեանը և առարկաների նկատմամբ: 1876 թ. սկսած աշխարհի տարբեր ծայրերում մեկը մյուսի ևս կամ սկսեցին հայտնաբերվել քարանձավներ, որոնց պատերին նախամարդը պատերել էր կենդանիներ, մարդկանց, որսի տեսարաններ և այլն³⁷:

Հստ էլույան, մարդու կողմից բիուտում իր ճաշակով փոփոխելու առաջին փորձն էր, որով և առ ոչ միայն սկսեց բավարարել ներքին ինքնադրսուրման պահանջները, այլև շրջակա միջավայրի անթրոպոգենն ազդեցության գործներացի սկիզբը դրեց:

Մարդու կողմից անթրոպոգեն քարանձավների օգտագործման երկրորդ փուլը սկսվում է այն պահից, երբ մարդը ձևափոխում և իր կարիքներին է հարմարեցնում քարանձավը: Պատմականորեն այս երևությունը սկսվում է զուգահեռաբար որտորդությունից՝ անասաւապահության և հավքչությունից երկրագործության անցնելու գործներացում: Որոշակիութեան փոխվում է նաև մարդու վերաբերմունքը քարանձավի նկատմամբ: Եթե նախկինում ինքնապաշտպանության բնազդը ստիպում էր մարդկանց ապրել մեծ խմբերով և համատեղ զանքերով դիմակայել տարբեր աղետների, ապա առաջընթացը մարդկանց արդեն ավելի փոքր խմբերի դարձեց դիմադրողներակ արտաքին աշխարհի բացասական գործուների նկատմամբ: Սկսեց անթրոպոգեն քարանձավների օգտագործման երկրորդ փուլը: Մարդիկ, որոնք դեռևս նախընտրում էին քարանձավում ապրել, այլևս բնակության համար մեծ քարանձավներ չեին փնտրում: Ավելին, նոր հասարակական հարաբերությունների պալմաններում մեծ քարանձավներն այլևս բնակության համար պիտանի չեին:

³⁶ Այստեղ թվագրումը պայմանական է, քանի որ տարբեր մասնագետներ այս հարցի վերաբերյալ ունեն տարբեր տեսակներներ, սակայն գրեթե բոլորը համգում են այն մտքին, որ «մշակութային» այս յուրօրինակ դրսւորմը նախամարդն իրականացրել է վաղ քարեղարի կեսերին:

³⁷ Ալտամիրի (Խսպամիհա) քարանձավի հայտնագործումից մետք Ֆրամփայում և Խսպամիհայում Խալտմարեկեցին 30-ից ավելի քարանձավներ, որոնց պատերը և առաստաղը ծածկված էին նախամարդու նկարած տարբեր կենդանիներով և տեսարաններով: Ավելի ուշ նախամարդությունները կատարվեցին Աֆրիկայում, Ասիայում, Ավստրալիայում:

Մնձ քարանձավները դադարեցին ծառայել որպես բնակավայր. լավագում դեպքում վեր էին ածվում փարախների³⁸ և կամ պահեստների: Որոշ դեպքերում մեծ քարանձավներն օգտագործվել են որպես ծիսական վայրեր, կամ վերածվել են սրբատեղիների³⁹. Այն պահից սկսած, երբ գործածական դարձան փոքր քարանձավները, «քարանձավային» մշակույթն սկսեց ձևավորվել բիոտոպի ընտանեկան, միջընտանեկան հարաբերությունների, ինչպես նաև սոցիալական, հոգևոր և կրոնական փոխհարաբերությունների ազդեցությամբ:

Քարանձավային բնակարանները բարեկարգվում կամ փորվում էին գրեթե նույն սկզբունքով. նույն շինարարական մտահացմամբ: Տարբեր տարածաշրջանների քարանձավները և քարանձավային բնակելի համալիրները սկսում են ձեռք բերել ինքնուրույն ճարտարապետական բնութագրեր: Բուրից մինչև Եփրատ և ապա Նեղոսի հովիտ բրոնզե դարը բնորոշվում է քարանձավա-բնակարամային մշակույթով, քարանձավները որպես բնակարան օգտագործելու սովորություն: Երևան են գալիս քարանձավային բնակարաններ, որն այսօր գիտական գրականության մեջ հայտնի է ուրարտական դամբարաններ (Տոկարսկի, Մելքոնյան, Բաթեր և այլն), վանտոսպյան դամբարաններ (Փիլիպոսյան, Մկրտչյան) և «Քենափոնյան տներ» (Օաթինյան)⁴⁰ անուններով: Ք. ա. I հազարամյակում հայտնված այս քարանձավները Հայաստանում, Միջագետքում, Մերձավոր Արևելքում, Եգիպտոսում, Եվրոպյում, Իրանում կիրառական են եղել մինչև մ.թ.ա. VII-V դդ.: Տարբեր երկրներում շինարարանարտարապետական մշակույթի զարգացումն ուղղակիորեն անդրադարձավ անթուպոգեն քարանձավների կառուցման ձևի, տեսքի և նշանակության վրա, որի հետևանքում քարանձավային սոտրգետնյա ճարտարագիտական կառուցմերը տարբեր երկրներում սկսեցին ավելի ու ավելի տարբերվել իրարից և ձեռք բերել «ազգային դիմագծեր»:

Ուրարտական դամբարանների տեսքը, մեր համոզմամբ, կրկնում է քարանձավային բնակարանների ճարտարապետական մանրամասները և գծերը: Սա պատճառաբանվում է հետևյալով: Համարույշը համեմայլապ աշխարհում ոչ միայն պետք է ունենար անհրաժեշտ բոլոր կենցաղային իրերն ու գույքը, շրջապատված լիներ ծառաներով և ստրոկներով, այլև հոգեհարազատ բնակարան, նման այն բնակարանին, որտեղ ապրել էր կենդանության օրոք:

³⁸ Նման դերակատարում են ունեցել Վայրի, Լոռվա, Զանգեզուրի, Գեղարքունիքի մի շարք քարանձավներ: Տե՛ս ՀԽՆԸՀ ԳԱ. Աշխարհագրական ընկերության քարանձավագիտական զոկուսի գիտական հաշվետվությունները 1982 – 89 թթ.:

³⁹ Խոսրովի արգելոցում Ազատի աշ վտակի մշշին հատվածում է գտնվում «Դավրիժեցու քարանձավը», որը հեթանոսական շրջանում տաճարի դեր է կատարել, իսկ ավելի ուշ, X-XII դդ., ապատեղ եկեղեցի է կառուցվել և վերածվել բրիստոնեական սրբավայրի: Համոզված ենք, որ Գեղարդի աղբյուրով սրաբը նոյնպես եղել է հեթանոսական սրբատեղի, համալիրի ամենամին կառուցը: Նման աղբյուրով քարանձավ շրջապատված ծիսական կառուցապատումներով ՀԱԿ-ի հետազոտողներից հանդիպել է նաև Վեդի գետի վտակների՝ Խոսրովի և Մամկութի ձորերի ժայռապատերի վրա (Հետ.):

⁴⁰ S. M. Shahinyan, The "Xenophon Dwellings" and their analogues in the basin lake Sevan, UIS 10 congress, 1989, p. 446 – 448.

Ուրարտական ժայռափոր դամբարանների հետազոտությամբ պատմական Հայաստանի տարածքում շատերն են գրաղվել⁴¹, սակայն համեմատական վերլուծության փաստերը բավականին սույն է: Ավելին, գոտ քարանձավագիտական հետազոտությունների արդյունքները, մասնագիտական այնպիսի հետինակավոր գագաթաժողովում, ինչպիսին Միջազգային Քարանձավագիտական Միավորման (UIS) կոնֆերներն են, գրեթե ներկայացված չեն եղել: Քարանձավագիտական հետազոտությունների արդյունքները սովորաբար մաս են կազմում այս կամ այն գիտական ուսումնասիրության՝ հնագիտական, ճարտարապետական, ճարտարագիտական, էկոլոգիական, գեոմորֆոլոգիական, երկրաբանական և այլն:

Ուրարտական քարանձավային դամբարանները հետազոտող գրեթե բոլոր գիտնականները նկատել են, որ անթրոպոգեն քարանձավները (առաջին հերթին նկատի են ունեցել ուրարտական դամբարանները) հիմնականում գտնվում են գետի ափամերձ ժայռապատերի մեջ⁴² կամ որևէ ջրային ավազանին մոտ: Հայաստանում ուրարտական շրջանի քարանձավների հետազոտությունները հիմնականում հաստատում է այս տեսակետը, սակայն մեր ունեցած տեղեկությունների համաձայն ժայռափոր գյուղեր, բնակավայրեր Ծիրակի դաշտավայրում, Կապարովկիայում, Գեղարքունիքում գտնվում են ջրային ավազաններից բավական հեռու: Այսինքն, նշված երևույթը խիստ օրինաչափություն չէ, չնայած միանգամայն տրամաբանական է, որ հնագույն շինարարները կնախընտրեին կառույց ստեղծել ջրին մոտ:

Դամբարաններին և ժայռափոր կառույցներին փոխարինելու եկած բնակելի ժողովշրջական տները և բնակավայրերը միշտ չեն, որ կառուցվում կամ փորվում էին ձորերում կամ լճափնյա ապարաշերտերում: Աղբյուրի առկայությունը միանգամայն բավարար էր ժայռափոր տներ կառույցներու համար, եթե, իհարկէ, տեղավայրի ապարների կազմը և շերտադրությունն այդ հնարավորությունն ընձեռնում էին⁴³: Սակայն պատմիչների և հնագետների կողմից արձանագրված փաստը էականորեն կարևոր է եղել ոչ միայն անձավարնակների համար: Զդից օգտվելու համար, գրեթե բոլոր ամրացված քերդերն ու բնակավայրերի բնակիչները ստորգետնյա անցուղիներ են կառույցել դեպի մոտակա ջրավազանը և կամ ստորգետնյա ջրատար անցկացրել մինչև բնակավայր: Թումելները, անցուղիները և քարվեգները, որպես ստորգետնյա ճարտարագիտական կառույցներ, զարմացնում են ոչ միայն իրենց լուծումներով, այլև հնագույն վարպետների ու ճարտարագետների բնության և նամանավանդ երկրաբանության ճանաչողության և շինարարության մեջ այդ գիտելիքների գերազանց կիրառման կարողությամբ: Այսօր շատ քիչ ճարտարագետներ կերպահանագործներն իրենց կողմից նախագծված և կառուցված թումելների երկարակեցություն թեկուց 100 տարով, այն դեպքում, երբ Անդի⁴⁴, Բջջի⁴⁵, Ամբերդի⁴⁶ թումելները, որ



⁴¹ H. Mapp, И. Орбели, Археологическая экспедиция 1916 года въ Ванъ. Петербург, Акад. Тип., 1922 г., с. 68. Fr. Ed. Shulz, Mémoires sur le lac de Van et Ses environs, "Journal Asiatique" t.s. IX, Paris, 1840.

⁴² Այս մասին գրում են Շուլցը, Օրբելին, Մ. Մալրումանը, Տուկարսկին, Ա. Փիլիպովյանը և այլոր: Նույնիսկ Մ. Խորենացին իր «Պատմության» մեջ, քարանձավների մասին գրելիս, երեցից երկու դաշտում եղան է գտնի կամ լիի մոտիկության մասին, նույն Առաքել Պավիհծեցին իր «Պատմության» մեջ:


⁴³ Քանենֆոն, Անարասիս, ՀՍՍՀ ԳԱ, 1970, Երևան, էջ 97:

⁴⁴ Կառավարություն, Պեղուսակ, ՀՍՍՀ ԳԱ, 1970, Երևան, էջ 151.



այսօր էլ մասամբ կամ ամրողապես պահպանվում են, 700 – 1000 տարի առաջ են կառուցվել, ավելին, Օրգովի⁴⁷ թունելը և Գեղարքունիքի⁴⁸ Սանգառ ամրոցի շրատարները, ամենայն հավանականությամբ, բրոնզեդարյա կառուցվել են:



Միջին (Սիրիա) դամբարանը
ըստ Տոկարսկու



Պերսեական միջնաբերդի դամբարան՝ ըստ
Ռուդոլֆ Նաումանի (Լյուդիա, Թուրքիայի
հարավ-արևմուտքը)



Աղյի դամբարանն ըստ Տոկարսկու

⁴⁵ ՀԽՍՀ ԳԱ, Աշխարհագրական Ընկերության քարանձավագիտական ջոկատի 1985 թ գիտական հաշվառությունը, N GO-176:

⁴⁶ Токарский, По страницам истории Армянской Архитектуры, иллюст. 40, 41, 42, 43.

⁴⁷ ՀԽՍՀ ԳԱ, Աշխարհագրական ընկերության քարանձավագիտական ջոկատի 1986 թ. դաշտային աշխատանքների հաշվետվությունը:

⁴⁸ Տե՛ս ՀԽՍՀ ԳԱ, Աշխարհագրական ընկերության քարանձավագիտական արշավայմբի 1986 թ. գիտական հաշվետվությունը և Ն. Հ. Միջավայրական «Աևանի ավազանի կիկլոպյան ամրոցները», ՀԽՍՀ ԳԱ, Երևան, էջ 33–35:

Միջնադարը քարանձավային ճարտարագիտական մի նոր և հետաքրքիր փուլ արձանագրեց, և սկսած II դարից մինչև V-XV դդ. ժայռափոր եկեղեցիների և սրբատեղիների կառուցման ժամանակաշրջանը էր: Հայատանում այն իր ծաղկման գագաթնականին հասավ XI-XIII դդ., երբ փորվեցին Ամինի Կարմիր եկեղեցին, Գեղարդի ժայռափոր համար Հոքանց անապատը: Ծինարարական այս գործընթացներից անմասն չմնացին սահմանակից պետությունների ժողովուրդները: Հայկական եկեղեցական ճարտարապետության սկզբունքով փորված եկեղեցներ, վանքային համալիրներ և մատուններ են կառուցվել Կապադովկիայում, Շորոյին վերին հոսանքների շրջանում, այսորվա Զաքարալավի շրջանի հյուսիս-արևելյան հատվածում և այլն: Ըստ որում նշված վայրերում ժայռափոր կառուցվելու համարի հայկական արձանագործությունները, հնագետները և ճարտարապետական լուծումներն ու խաչքարային արվեստի հմուշները կասկած չեն թողնում սրանց հայկական ծագման մասին: Պավլիկյան և ապա Թոնդրակյան շարժման հետևանքով Հայատանից հեռացածները երկի թե այս մշակույթը փոխադրեցին Եվրոպա, Մերձավոր Արևելք և Հարավ-Արևելյան Աֆրիկա և այսօր Բուլղարիայում, Հյունատանում, Իտալիայում, Եվրոպայում գտնվող ժայռափոր մի շարք եկեղեցների բացահայտ աղերսներ ունեն հայկական ճարտարապետության հետ: IV դ. սկսած քարանձավային ճարտարագիտությունը հայկական մշակույթը հարստացրեց մի հետաքրքիր երևույթով, որը մեր կողմից անվանվել է քարե դոմերով քարանձավներ՝⁴⁹:

Սակայն ժայռափոր ճարտարագիտական կառուցվելու մեջ շահեկանորեն առանձնանում են եկեղեցները: Ժայռափոր եկեղեցաշինության փաստեր հայտնի են և այժմ էլ պահպանվում են մի շարք երկրներում Եվրոպայում, Իտալիայում, Կապադովկիայում, Հունատանում, Բուլղարիայում, սակայն հայկական եկեղեցաշինության ճարտարապետությունը, համանական XI-XIV դդ., ցնցում է իր ճարտարագիտական լուծումներով, համակարգվածությամբ, սկզբունքային կանոնակարգվածությամբ և գեղեցկությամբ:

Հայատանում ժայռափոր սրբավայրերի կառուցման շինարարական, ճարտարագիտական և գեղագիտական սկզբունքները, առա տեխնոլոգիաները հազարամյակներով հղվել և մշակվել են: Գեղարդի, Ամինի Կարմիր եկեղեցները, Քաշաթաղի՝ Հոչանց և Քրոնք, Վալքի Մարտիրոսաց և Կապադովկիայի վանքերը զարմացնում են իրենց կատարելությամբ և շինարարական ու ճարտարագիտական մտահացմամբ: Ավելին, այս շինությունները կրկնում են «Վերերկրյա» եկեղեցաշինության բոլոր սկզբունքները, մի քանի որ իրականացնելը տասնյակ անգամ դժվար էր, քանի որ ապարները և երկրաբանական շերտերն ու շերտախմբերը, որոնցում սրանք փորվել են, միատարր չեն, ապարների կարծրությունը փոխվում է յուրաքանչյուր մի քանի սամտիմետրի վրա և կատարյալ գիծ կամ ձև (ֆորմա, ֆիզուր) ստանալու համար չափազանց արդիական տեխնիկա և ճարտարագիտական նուրբ տեխնոլոգիաներ են անհրաժեշտ: Զնայած սրան, մենք դասական ճարտարապետության կատարելության և զարմանալի մտահացումների վկան ենք լինում ամեն

⁴⁹ Քարե դոմերով քարանձավների մասին տողերիս հետիմակի կողմից 1985-90 թթ. հրատարակումներ են եղել ինչպես Հայատանի գիտական մատուցմ, այնպես էլ Ռուսատանում, Ավստրիայում, Հունգարիայում, ինչպես առև Ենթակայացվել է առանձին գննության տեսազրությունում: Այսուհետեւ ԱՄ Արքայի Ստանդարտում և Ելուրի կամացագանում (Հետ.):

Տե՛ս Առև.՝ “Հայոց Արարեցու պատմությունը և առաջանական հայությունը Հայաստանում և Արևելյան Աստվածաշնորհությունը” (Հետ.):

մի ժայռափոր եկեղեցի մուտք գործելիս, մանավանդ, երբ սրանք փորվել են X-XIV դդ.: Համեմատական վերլուծությունը ցուց է տալիս, որ այլ երկրներում ժայռափոր եկեղեցիների կառուցումը որոշակի պատմաքաղաքական հրավիճակի հետևանք է եղել և ոչ թե ճարտարապետական մորքի աստիճանական զարգացման բնականոն ընթացք, օրինակ, Հռոմի կատակոմբները (տես ծմթ. 30): Կամ բարեկարգել են արդեն գոյություն ունեցող այրերը՝ նրանց տալով եկեղեցու կամ մատուի տեսք, ինչպես, օրինակ, Բուլղարիայում⁵⁰ (տես ծմթ. 32): Որոշ ժողովուրդները ժայռափոր եկեղեցաշինության մեջ բավական հաջողություններ են ունեցել և կառուցել երեսի շինություններ: Սրա տիպիկ օրինակ կարող է ծառայել Եթովպիայում Լալիբելա կոչվող վայրում կառուցված ժայռափորները: Սրանք հավասարաթև խաչի տեսք ունեցող պլանով կառուցված եկեղեցիներ են: Կառուցումն իրականացվել է հետևյալ կերպ: Սկզբում ընտրվել է պինդ ապար ունեցող երկրաբանական շերտ, որի հաստվածքը կրավարարեր ճարտարապետական մուաჩացման իրականացմանը, ապա մայր ապարի վրա գծագրվել է եկեղեցու պլանը և ըստ այնմ փորվել դեպի շերտի խորքերը: Եկեղեցու արտաքին պատկերը ժայռեղեն ծավալի մեջ ստանալուց հետո շինարարները ձեռնամուխ են ենել ներքին բարեկարգման գործընթացին: Համոզվենք, որ ունենալով արտաքին բոլոր պատերը բոլորած եկեղեցական շինությունը, շինարարի համար պակաս դժվարություն էր մերկացնելում փորել ժայռեղեն կառուցի ներառ, քան հայկական դասական ժայռափոր եկեղեցիների դեպքում, երբ շինարարը գրկված էր արտաքին որևէ ուղղորդող չափորոշիչ ունենալու հնարավորությունից:

Հաշվի առնելով տեղի սղությունը, ամփոփենք մեր ասելիքը մշակույթի զարգացման հիմնական փուլերը գրանցենով.

1. Քարանձավները որպես ժամանակավոր կամ երկարաժամկետ պատսպարան:
2. Քարանձավը որպես երկարատև պարբերաբար օգտագործման կացարան քարենարի մարդկանց մեծ խմբերի համար: «Քարանձավային պատկերասրաբների» սկզբանավորումը:
3. Հավաքչությունից և որսորդությունից հողագործության և անասնապահության անցման շրջանում ցեղի տրոհումը ընտանիքների և մեծ քարանձավները որպես կացարանակավայր ժամանակաշրջանի ավարտը:
4. Քարանձավային բնակավայրեր, ժայռափոր տներ, ուրարտական դամբարանները: Վերերկրյա ճարտարապետության բաղադրիչների կիրառումը: Բնակարանային ճարտարապետության տարրերի կիրառումը ժայռափոր դամբարաններում:
5. Միջնադարյան ժայռափոր եկեղեցիների մշակույթը:
6. Քարանձավային քաղաքների և բնակավայրերի ծաղկումը X-XIV դդ. և վերացումը XX դ. առաջին կեսին:

⁵⁰ Հայկական ժայռափոր եկեղեցիները կառուցվել են եկեղեցական ճարտարապետության կանոնակարգերի խստացով կիրառմամբ, օրինակ, մուտքը, որպես կամոն, մայում է դեպի արևելք, բևմը և խորանները կառուցվել են համարում ճարտարապետական ընդհանուր լուծմանը, որոց դեպքերում «կեղծ գմբեթները» հրականացվել են «Վերերկրյա ճարտարապետության դասական օրինակով, ինչպես, օրինակ, Գեղարդը, Մարտիրոսաց վանքը, Քաշաքաղի մատուրը, Քրոնքը, Ամին Կարմիր եկեղեցին և այլն: Խսկ բուլղարական և հունական ժայռափոր եկեղեցիներում այս ամենը բացակայում է: